ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՄԱՅՐԵՆԻԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կատարող՝ **Հ.Օշականի անվան հ.172 հիմնական դպրոցի ուսուցիչ Մարիամ Մանուկյան**

Ղեկավար՝ **Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջ. Հ. Գյուլամիրյան**

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

ԳԼՈՒԽ 1. ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ……6

1.1 Հետաքրքրաշարժությունը որպես ուսումնական գործունեության պայման……6

1.2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման ընթացքում……8

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱՔՐՔՔՇԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ «ԲԱՅ» ԽՈՍՔԻ ՄԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ (ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ)……14

2. 1. «Բայ» խոսքի մասի ուսումնասիրումը հեքիաթների միջոցով…… 14

2.2. Ինտեգրված դասերը որպես մայրենիի ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրաշարժության բարձրացման միջոց……15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… . …… . ….21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …… 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը: Տարրական դպրոցի մայրենիի ծրագրում լեզվական գիտելիքներն ուսումնասիրվում են երկու փուլով: Այդ ուղղությամբ աշխատանքն սկսվում է դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանում, երբ աշակերտները վերարտադրում են նկար-պատմության բովանդակությունը, դրանից առանձնացնում նախադասություններ ապա բառեր՝ որոշելով դրանցում վանկերի, հնչույթների քանակն ու տեսակը: Կազմում են համապատասխան գծապատկեր:

Տարրական դպրոցում ուսումնառության տարիներին սովորողները ծանոթանում են լեզվական որոշակի գիտելիքների հատկանիշներին, ձեռք են բերում դրանց առնչվող բազմաթիվ կարողություններ: Այս գործընթացում սովորողները կրում են բազմաթիվ դժվարություններ, որոնց անհաղթահարելիության պատճառով կորչում է մայրենիի նկատմամբ նրանց հետաքրքրաշարժությունը: Այս խնդրի հաղթահարման և գործընթացը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու նպատակով մենք կարծում ենք, որ լեզվական գիտելիքների ուսումնասիրման փուլերը պիտի իրականացնել՝ գործածելով ոչ ստանդարտ մեթոդական հնարներ:

Այսպիսով, մեր մագիստրոսական թեզի հիմնախնդրի ***արդիականությունը*** պայմանավորված է տարրական դպրոցում լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացը հետաքրքրաշարժ մեթոդական հնարներով իրականացնելու անհրաժեշտությամբ և այդ առնչությամբ մեթոդիկայի բացակայությամբ:

Մեր ուսումնասիրությունների ***նպատակն է*** լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունն ու հետաքրքրաշարժությունն ապահովող մեթոդական հնարների մշակումը:

Նշված նպատակի իրականացման համար մենք լուծել ենք հետևյալ հիմնական **խնդիրները**.

1. Ուսումնասիրել լեզվական գիտելիքներիր մասին առկա լեզվաբանական և մեթոդական գրականություն:
2. ՈՒսումնասիրել լեզվական գիտելիքների տեղն ու դերը երեխայի բառապաշարում, նրա զարգացումը տարիքն ի վեր:
3. Դիտարկել տարրական դպրոցում լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի փուլերը և այդ առնչությամբ մայրենիի դասագրքերի հնարավորությունները:
4. Մշակել լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը նպաստող հետաքրքրաշարժ մեթոդական համալիր (հնարներ, խաղեր, հեքիաթներ, իրադրային վարժանքներ) և փորձարկել նրա կիրառելիությունը լեզվական գիտելիքների ուսումնասիրման տարբեր փուլերում:

Մեր ուսումնասիրության ***նորույթը*** դասի տարբեր փուլերում մայրենիի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը նպաստող ոչ ստանդարտ մեթոդական հնարների մշակումն է:

ՈՒսումնասիրման ***մեթոդները:***

- Հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականության ուսումնասիրում,
- Դասալսումներ հանրակրթական դպրոցի I – IV դասարաններում, արդյունքների քննարկում,
- Հարցախույզի և արդյունքների վերլուծություն,
- Նախօրոք մշակված ծրագրով և պլանով մայրենիի դասերի վարում, մշակած խաղերի և մեթոդական հնարների փորձարկում, արդյունքների վերլուծություն:

Ուսումնասիրության առարկան: Մայրենիի դասի լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի հետաքրքրաշարժության ապահովումն է:

Ուսումնասիրության օբյեկտը: Տարրական դասարաններում իրականացվող մայրենիի դասագործընթացն է՝ լեզվական գիտելիքների ուսումնասիրման բաղադրիչով:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը: Մասնագիտական գրականությունից և մեր մանկավարժական փորձի ընթացքում ձեռք բերած գիտելիքները շարադրվել են և վերլուծվել՝ հիմք ընդունելով լեզվական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման մեթոդաբանությունը:

ՈՒսումնասիրության գործնական նշանակությունը: Մեր մշակված լեզվական գիտելիքների ուսումնասիրման գործընթացին վերաբերող մեթոդական երաշխավորությունները և առաջադրանքների ու վարժությունների, դիդակտիկ խաղերի համալիրը կարող է կիրառվել տարրական դպրոցում:

Ուսումնասիրությունների համար բազա է ընտրվել Երևանի Հակոբ Օշականի անվան համար 172 դպրոցի տարրական դպրոցը, որտեղ մենք աշխատում ենք որպես ուսուցիչ: Ուսումնասիրությանը մասնակցել է 30 ուսուցիչ և 60 աշակերտ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

1.1. ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Մարդկության զարգացմանը համընթաց առաջանում է սերնդի կրթության գործընթացին ներկայացվող պահանջներն արդիականացնելու անհրաժեշտություն: Մասնավորապես դրվում է ուսուցման նպատակները, մեթոդներն ու միջոցները արդիականացնելու խնդիր: Գաղտնիք չէ, որ այսօրվա աշակերտին դժվար է որևէ բանով զարմացնելը, և այդ ճանապարհով նրա ուշադրությունը կենտրոնացնելը դյուրին չէ: Անառարկելի է, որ առանց այս հոգեկան գործընթացի բավարար չափով զարգացածության անհնարին է իրականացնել արդյունավետ ուսումնական գործունեություն. դասի ժամանակ ուսուցիչը աշակերտների ուշադրությունը պիտի հրավիրի ուսումնական նյութի վրա, ավելին այն երկար ժամանակ պահի՝ տեղափոխելով նրա ուշադրությունը աշխատանքի մի տեսակից մյուսի ուղղությամբ:

Հայտնի է, որ դեռևս ավագ նախադպրոցական տարիքում տիրապետող է երեխաների ոչ կամածին ուշադրությունը: Նրանց համար արտաքին տպավորություններն ազդեցիկ գործոն են, և առանց դրա սովորողները դժվարանում են կենտրոնանալ իրենց անծանոթ և անհասկանալի, դժվար ըմբռնելի նյութի վրա: Վաղ կրտսեր դպրոցականի ուշադրությունը թեև նախադպրոցականի համեմատ ավելի զարգացած է, սակայն այն տարբերվում է սահմանափակ ընդգրկունությամբ, թույլ կայունությամբ. նրանք կարող են որևէ գործով կենտրոնացած զբաղվել 7-10 րոպե: Սակայն ուսումնական գործունեության ընթացքում, բնականաբար, աստիճանաբար զարգանում է երեխայի կամածին ուշադրությունը, որը ուսումնական գործունեության ընթացքում նպաստում է նյութի գիտակցական ըմբռնմանը և մտապահմանը: Մեր համոզմամբ՝ այս խնդիրներն արդյունավետ լուծելու համար

անհրաժեշտ է դասը կազմակերպել հետաքրքրաշարժ ոչ ստանդարտ մեթոդների կիրառմամբ:

Ինչպես մեր մանկավարժական փորձի վերլուծությունից, այնպես էլ տարբեր դասարանների ուսուցիչների շրջանում մեր իրականացրած հարցախույզի արդյունքներից պարզ դարձավ, որ աշակերտները հատկապես դժվարանում են լեզվական առաջադրանքներ կատարելիս, ավելին՝ կատարում են, սակայն դրսևորելով ոչ գիտակցական գործունեություն:

Հայտնի է, որ տարրական դասարաններում մայրենին ուսումնասիրվում է որպես ինտեգրված առարկա, այնուամենայնիվ, բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու համար աշակերտը պիտի ձեռք բերի քերականական տարրական գիտելիքներ: Այս գիտելիքները կրտսեր դպրոցականների համար բավականին բարդ են հատկապես նրանց վերացականությամբ պայմանավորված: Որքան էլ որ մշտապես նշվում է, որ լեզվական գիտելիքները տարրական դպրոցում ուսումնասիրվում է գործնականորեն վարժությունների կատարման ճանապարհով: Սակայն փորձը ցույց է տալիս, որ անգամ վարժությունների յուրացման գործընթացում երեխաները դժվարանում են, մասնավորապես նրանց խանգարում է ուշադրության ոչ կամածինությունը: Այս իմաստով, դժվարությունները հաղթահարվում են, և դասի արդյունավետությունը բարձրանում է, երբ ուսումնական նյութի յուրացման գործընթացում կարևորվում է հետաքրքրաշարժության ապահովումը: Եվ մենք մեր ուսումնասիրությունների, մանկավարժական փորձի և գործընկերների աշխատանքի ուսումնասիրման գործընթացում ևս համոզվեցինք, որ լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացն արդյունավետ է, երբ կիրառվում են տարաբնույթ հետաքրքրաշարժ վարժություններ, մեթոդական հնարներ, խաղեր, ներկայացումներ և այլն:

Ուսուցման գործընթացը կազմակերպվում և իրականացվում է ոչ միայն բոլորին քաջածանոթ մեթոդներով, այլև կան նաև ուսուցման ոչ ստանդարտ մեթոդներ: Դրանք կոչվում են ոչ ստանդարտ, քանի որ արմատապես տարբերվում են

սովորականներից: Ոչ ստանդարտ մեթոդների մշակումը և կրթական գործընթացում դրանց ներմուծումը պայմանավորված է նրանով, որ գիտելիքների ձեռքբերումն ինքնին բարդ գործընթաց է, որը պահանջում է ուղիների և միջոցների մշտական զարգացում ՝ գիտելիքների ձեռքբերման արդյունավետությունը բարձրացնելու համար: Կրթության ոլորտում միշտ էլ անհրաժեշտ է բաց լինել նորարարությունների համար: Ուսուցման ոչ ստանդարտ մեթոդները ուսուցիչները օգտագործում են այն դեպքում, երբ ավանդական մեթոդները չեն տալիս անհրաժեշտ կրթական արդյունքը, կամ դրա արդյունավետությունը չափազանց ցածր է: Այս մեթոդները միավորում են ուսուցման կազմակերպման մի շարք ձևեր և տեխնիկաներ, որոնք ակնհայտորեն տարբերվում են ավանդական մեթոդներից: Ուսուցման ոչ ստանդարտ մեթոդները ժամանակակից մեթոդներ են: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ նախկինում կրթության մեջ ընդունելի էին միայն ավանդական մեթոդները, և դրանցից տարբերվող բոլոր մեթոդներն անընդունելի էին: Ներկայումս կան այլընտրանքային կրթության կողմնակիցներ և հակառակորդներ: Հետևաբար յուրաքանչյուր ուսուցիչի համար ուսուցման մեթոդների ընտրության հարցը բաց է և որոշվում է անհատապես: Ուսուցման մեթոդ ընտրելու հիմնական պայմանը՝ սահմանված կրթական նպատակներին, սովորողների տարիքին և բովանդակությանը համապատասխանելն է:

1. 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Լեզու սովորելու և ուսուցանելու արդիական և արդյունավետ մեթոդներից մեկը այդ լեզվով զանազան կինոնկարներ դիտելն է: Քանի որ աշակերտները ոչ միշտ են գրագետ մարդկանց միջավայրում ապրում, կինոնկարը ստեղծում է գրագետ բնական լեզվական միջավայր, շփման համար անհրաժեշտ պայմաններ և ամենակարևորը՝ հետաքրքրաշարժություն: Յուրաքանչյուր կինոնկար տվյալ լեզվի բառապաշարի և արտահայտությունների բառարան է: Այն նպաստում է աշակերտի

խոսքի ճիշտ առոգանության ձևավորմանը, կատարելագործում է բանավոր խոսքը: Կինոնկարների դիտման, բովանդակության շուրջ աշխատանքի միջոցով, մայրենին ուսուցանելու հիմնական նպատակը խոսակցական, հաղորդակցական լեզվի, միմյանց հետ շփվելու, բանավոր խոսքի ընկալման աշակերտների հմտությունների ձևավորումն ու զարգացումն է, ինչպես նաև ստացած գիտելիքների և հմտությունների գործածման կարողության ձևավորման գործընթացի բարելավումը: Առաջնորդվելով կրտսեր դպոցականների տարիքային առանձնահատկություններով՝ ***առարկա***, ***գործողություն*** և ***հատկանիշ*** ցույց տվող բառերի մասին սովորողների գիտելիքների և կարողությունների ամրապնդման դասի ժամանակ մեր դասավանդած դասարանում կազմակերպել ենք բազմաթիվ կինոնկարների դիտում և քննարկում (ի դեպ՝ ինչպես դասարանում, այնպես էլ տանը): Ներկայացնենք դրանցից մեկը: Երկրորդ դասարանում կազմակերպեցինք «Անճոռնի ճուտիկը» մուլտիպլիկացիոն կինոնկարի դիտումը:[22] Երեխաներին նախապես տեղեկացրինք, որ մուլտֆիլմ են դիտելու: Տրվեց առաջադրանք. մուլտֆիլմին զուգահեռ դուրս գրել այն առարկաների անվանումները, որոնք ֆիլմը դիտելիս կտեսնեն: Երեխաներին բաժանեցինք թուղթ և գրիչ: Աշխատանքը իրականացրինք խմբային աշխատանքի միջոցով: Երեխաները բաժանվեցին 3 խմբի: Յուրաքանչյուր խումբ ստացավ հանձնարարություն: Մուլտֆիլմի դիտման ընթացքում աշակերտները գրում էին կինոնկարում իրենց տեսած առարկա ցույց տվող բառերը: Մուլտֆիլմի ավարտին հանձնարարեցինք խմբերում քննարկել գրած բառերը, կրճատել կրկնվող բառերը, ամբողջացնել և ներկայացնել դասարանին: Աշակերտները դուրս գրեցին՝ ***ճուտիկներ, ձու, լճակ, հավ, սագ, գյուղացի, երամ, ձվեր, ձագուկներ, ծաղիկներ, խոտեր, կեր, ձյուն, գնացք, վագոններ, ծառեր, աչքեր, գոգնոց, տերևներ, սարեր, աքաղաղ, քարեր, որդեր, լուսին, աստղեր, մոմեր, մայրիկ, փերի, շուն, կատու, ոսկորներ, կաթ, մածուն, գնդակ, ամպեր, արև, ջրաղաց, ընկերներ, կարապ*** բառերը:

Նախ քննարկեցինք առանձնացրած բառերի համապատասխանությունը առաջադրանքին: Ապա խմբավորեցինք նույն հարցերին պատասխանող բառերը, ներկայացրինք աղյուսակով:

Ո՞վ	Ովքե՞ր	Ի՞նչ	Ինչե՞ր
մայրիկ, փերի, գյուղացի	**ընկերներ,**	**ձու, լճակ, հավ, սագ,, երամ, կեր, ձյուն, գնացք, գոգնոց, աքաղաղ, լուսին, շուն, կատու, կաթ, մածուն, գնդակ, արև, ջրաղաց, կարապ**	**ճուտիկներ, ձվեր, ձագուկներ, ծաղիկներ, խոտեր, ամպեր,վագոններ, ծառեր, տերևներ, սարեր, աչքեր, քարեր, որդեր, աստղեր, մոմեր, ոսկորներ**

Հաղթող ճանաչվեց ամենաշատ առարկա ցույց տվող բառեր դուրս գրած խումբը: Երկրորդ փուլում հանձնարարեցինք դուրս գրած առարկա ցույց տվող բառերին ավելացնել ինչպիսի հարցին պատասխանող հատկանիշ ցույց տվող բառեր՝ կազմելով բառակապակցություններ: Խմբերին տվեցինք հավասար քանակությամբ բառեր, իսկ աշխատանքը կատարելու համար տրվեց 5 րոպե ժամանակ:

1-ին խումբ

Հատկանիշ	Առարկա
խոշոր	ձու
կայտառ	լճակ
կչկչան	հավ
մոխրագույն	սագ
համերաշխ	երամ

սննդարար	կեր
ճերմակ	ձյուն
արագընթաց	գնացք
խոհանոցային	գոգնոց
կարմրակատար	աքաղաղ
սիրուն	լուսին
հավատարիմ	շուն

2-խումբ

Հատկանիշ	**Առարկա**
փափկամազիկ	կատու
համեղ	կաթ
թթվաշ	մածուն
կարմիր	գնդակ
պայծառ	արև
հին	ջրաղաց
հիասքանչ	կարապ
հոգատար	մայրիկ
բարի	փերի
աշխատասեր	գյուղացի
անբաժան	ընկերներ
ճվճվան	ճուտիկներ
մանր	ձվեր
փոքրիկ	ձագուկներ

3-րդ խումբ

Հատկանիշ	**Առարկա**
երփներանգ	ծաղիկներ

կանաչ	խոտեր
սև	ամպեր
սաղարթախիտ	ծառեր
գույնզգույն	տերևներ
խրոխտ	սարեր
խոշոր	աչքեր
թանկարժեք	քարեր
անձրևային	որդեր
փայլփլուն	աստղեր
հոտավետ	մոմեր
ամուր	ոսկորներ

Երրորդ փուլում աշակերտներին հանձնարեցինք իրենց կազմած բառակապակցություններից երեքը գործածել նախադասությունների մեջ և դրանցում ընդգծել գործողություն ցույց տվող բառերը: Այս աշխատանքի համար տվեցինք 5 րոպե ժամանակ: Աշխատանքի ընթացքում ուշադրություն էինք դարձնում, որ բոլոր աշակերտները ընդգրկված լինեն աշխատանքում, քննարկումները իրականացվեն «գրադարանային ձայնով»՝ առանց մեկմեկու խանգարելու:

1-ին խումբ

Բառակապակցություն	**Նախադասություն**
սննդարար կեր	Գյուղացին ճուտիկներին կերակրում էր սննդարար կերով:
ճերմակ փաթիլ	Ճերմակ փաթիլները երկնքից դանդաղ իջնում էին ցած:
արագընթաց գնացք	Մենք արագընթաց գնացքով ուղևորվեցինք Գյումրի:

2-րդ խումբ

Բառակապակցություն	Նախադասություն
հին ջրաղաց	Պապիկի տունը գտնվում է հին ջրաղացի մոտ:
հիասքանչ կարապ	Կենդանաբանական այգու այցելուները զմայլված նայում էին հասքանչ կարապին:
հոգատար մայրիկ	Հոգատար մայրիկը խնամում էր իր զավակներին:

3-րդ խումբ

Բառակապակցություն	Նախադասություն
Երփներանգ ծաղիկներ	Աղջիկները դաշտում երփներանգ ծաղիկներ հավաքեցին:
Կանաչ խոտեր	Մարգագետինը զարդարում էին անուշաբույր ծաղիկներն ու կանաչ խոտերը:
Խոշոր աչքեր	Մեր դասընկեր Նարեկը խոշոր աչքեր ունի:

Այս աշխատանքի ընթացքում եկանք այն եզրակացության, որ այսպիսի աշխատանքներ կազմակերպելը հարմար է երկրորդ դասարանի վերջում, որովհետև այդ փուլում նրանք արդեն ձեռք բերած են լինում որոշակի գիտելիքներ և կարողություններ: Եվ այս հնարները շարժում են ինչպես երեխաների հետաքրքրասիրությունը, այնպես էլ ամրապնդում են «Առարկա-գործողություն-հատկանիշ» թեմաների շուրջ ունեցած երեխաների գիտելիքներն ու կարողությունները:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱՔՐՔՐՔՇԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ «ԲԱՅ» ԽՈՍՔԻ ՄԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ (ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ)

2.1. «ԲԱՅ» ԽՈՍՔԻ ՄԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՈՒշագրավ են ռուս մանկական ուսուցողական «Ողջո՞ւյն, Գոյական», «Ողջո՞ւյն, քեռի Բայ», «Բարի օր, Ածական» գիրքերը (հեղինակ՝ Տատյանա Ռիկ): Դրանք նախատեսված է ինչպես միջին դպրոցի սովորողների, այնպես էլ ծնողների, մանկավարժների և կրտսեր դպրոցականների համար: Գրքերի կառուցվածքը շատ հետաքրքիր է: Դրանք, ասես, ամբողջական վիպակներ լինեն, միևնույն ժամանակ՝ քերականության դասագիրք: «Ողջո՞ւյն, քեռի Բայ» գիրքը ամբողջությամբ բայի մասին է: Ընթերցողը հետաքրքրաշարժ հարցերի, պատմությունների միջոցով ծանոթանում է բայի բոլոր քերականական կարգերին, որոնք փոխշաղկապված են և շարունակվում են հերոսների մասին պատմություններով: Հեղինակը, իրոք, մեթոդական վարպետությամբ է իրականացրել այս աշխատանքը: Գրքում ներկայացված յուրաքանչյուր նյութ հեքիաթ է, որի հերոսները ինչպես կենդանիներ են, մարդիկ, այնպես էլ՝ խոսքի մասերը: Յուրաքանչյուր լեզվական իրողություն նախ դիտարկվում է հենց այն հեքիաթի բովանդակության շրջանակում, որը պատմում է տվյալ նյութի մասին: Հեքիաթներում շատ են չափածո հատվածները, որոնք ընթերցվում են հետաքրքրությամբ: Հեքիաթին կից տրվում է լեզվական որևէ կարգի քերականական բնութագիրը և վերջում միայն ձևակերպում է սահմանումը:

Մենք մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում կիրառել ենք Ռիկի հեքիաթներից մի քանիսը: Քանի որ բայի ժամանակի ու դեմքի քերականական կարգերը ռուսաց լեզվում և հայերենում գրեթե չեն տարբերվում, մենք այդ հեքիաթները թարգմանել ենք հայերեն և դասի ընթացքում գործածել գրեթե նույն մեթոդական քայլաշարով: Ներկայացնենք «Բայի դեմքը», «Բայի ժամանակը» հեքիաթների բովանդակությունը:

Ինչպես տեսնում ենք, «Բայի ժամանակը» հեքիաթի հերոսը կրիան է: Մի անգամ նրան հյուրերից մեկը հարցնում է, թե նա քանի տարեկան է: Կրիան պատասխանում է, որ երբ մարդը մեծանում է, նոր սկսում է ժամանակի մասին մտածել: Անցյալում ինքը փոքրիկ էր, խաղում ու զվարճանում էր, բայց անցյալն էլ ետ չես բերի: Հիմա ինքը ընտանիք ունի և հոգում է ընտանիքի անդամների կարիքները: Սակայն ապագայում կուզեր հանգստանալ, մեկնել հանգստյան վայրեր, լինել երազանքների քաղաքներում և այլն: Այս ամենը գրված է չափածո և յուրաքանչյուր հատվածում օգտագործված են տարբեր ժամանակի բայեր:

Այս հեքիաթի ուսումնասիրությունը մենք իրականացրինք Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան հեղինակների «Մայրենի 4» դասագրքի «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» դասանյութի շրջանակներում «Լեզվաբանի դասը» բաժնի «Բայ. Բայի ժամանակը» թեմային զուգահեռ: [Մայրենի 4, էջ 124] Ուսուցիչը կարդաց հեքիաթը, աշխատեցին բովանդակության ըմբռնման շուրջ, դուրս գրեցին գործողություն ցույց տվող բառերը: Այնուհետև երեխաներն ուսուցչի հանձնարարությամբ կարդացին, քննարկեցին բովանդակությունը, հարցերի օգնությամբ բացահայտեցին գաղափարը: Բառային աշխատանքի ընթացքում հարցերի միջոցով երեխաներն առանձնացրին և ընդգծեցին հեքիաթի մեջ գործածված բայերը: Այնուհետև դասարանը բաժանվեց խմբերի (5 խումբ): Երեխաներին առաջարկեցինք որոշել և դուրս գրել բոլոր բայերը, քննարկեցինք նրանց հատկանիշները (դեմք, թիվ, ժամանակ) և դասակարգեցինք ըստ այդ հատկանիշների: Այս աշխատանքի արդյունքները քննարկելիս մեկ անգամ ևս համոզվեցինք, որ ցանկացած լեզվական նյութ երեխաները ավելի հեշտ են ընկալում խաղերի, մեթոդական հնարների, խմբային աշխատանքների, հետաքրքրաշարժ հնարների միջոցով:

2. 2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Եթե դպրոցում սովորող աշակերտը չի սովորել ինքնուրույն որևէ բան ստեղծել, ապա կյանքում նա միշտ ընդօրինակելու է, պատճենելու է, քանի որ քչերն են այնպիսիները, ովքեր, սովորելով պատճենել, կարող էին ինքնուրույն կիրառել այս տեղեկատվությունը:

Լ. Տոլստոյը

Լ. Տոլստոյի այս խոսքերը արդիական կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ դպրոցը գոյություն կունենա: Խնդրի կարևորությունը՝ աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացումը, մեր կարծիքով, պայմանավորված է երկու հիմնական պատճառով: Դրանցից առաջինը սովորելու նկատմամբ հետաքրքրության անկումն է: Նկատե՞լ եք, թե ինչպես է փայլում վեց տարեկան երեխաների աչքերը, որոնք առաջին անգամ դպրոց են գալիս: Նրանց մեծ մասը ուսումնառությունից ակնկալում է նոր, անսովոր, հետաքրքիր մի բան: Երեխաները վստահորեն նայում են ուսուցչին, նրանք լի են մեզ հետ նոր բացահայտումներ կատարելու ցանկությամբ: Ինչպե՞ս բացատրել ուսման նկատմամբ հետաքրքրության հետագա անկումը: Դպրոցականների տարիքային առանձնահատկությունները: Հասարակության ներկա վիճակը: Անկասկած, այս գործոնները կարևոր դեր են խաղում: Բայց հիմնական պատճառը, կարծում ենք, այլ է:

Հակասություն կա դպրոցում ուսումնական պլանի անընդհատ աճող բարդության և հասարակության, պահանջների անընդհատ աճող մակարդակի և սովորողների կողմից իրեն առաջարկվող տեղեկատվության ամբողջ քանակությունը յուրացնելու կարողության միջև: Չկարողանալով հաղթահարել նման սթրեսները, երեխաները պարզապես դադարում են սովորել, ընտելանում են անգործությանը: Մեր համոզմամբ երեխաներին հետաքրքիր է միայն այն դասը, որին ակտիվ մասնակիցն

են իրենք: Մեր պրակտիկայում համոզվեցինք, որ փոխներգործուն դասերը ավելի հետաքրքրական են և բարձրացնում են ուսումնական նյութի արդյունավետությունը:

Մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ մայրենիի ժամն էլ ավելի հետաքրքրաշարժ է դառնում, երբ նրան ինտեգրում ենք մեկ այլ առարկա: Ինտեգրման գաղափարը վերջերս դարձել է ինտենսիվ տեսական և գործնական հետազոտությունների առարկա՝ պայմանավորված կրթության ոլորտում տարբերակման գործընթացների հետ: Դրա ներկայիս փուլը բնութագրվում է և՛ էմպիրիկ ուշադրությամբ, և՛ ուսուցիչների կողմից ինտեգրված դասերի զարգացումով, և՛ տեսականորեն՝ ինտեգրված դասընթացների ստեղծմամբ, և՛ կատարելագործմամբ, որոշ դեպքերում՝ համատեղելով բազմաթիվ առարկաներ, որոնց ուսումնասիրությունը նախատեսված է ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերով: Ինտեգրումը հնարավորություն է տալիս, մի կողմից սովորողներին ցույց տալ «աշխարհը որպես ամբողջություն», հաղթահարելով գիտական գիտելիքների մասնատվածությունը առարկաներում, իսկ մյուս կողմից ՝ նպատակային օգտագործել ժամանակը՝ ուսումնական տարբերակված խնդիրները լիարժեք իրականացնելու համար: Այլ կերպ ասած՝ գործնական տեսանկյունից ինտեգրումն ընդգրկում է միջառարկայական կապերի ամրապնդում, աշակերտների ծանրաբեռնվածության նվազում, աշակերտների ստացված տեղեկույթի շրջանակի ընդլայնում և ուսուցման դրդապատճառայնության ուժեղացում: Ուսուցման ինտեգրված մոտեցման մեթոդական հիմքը՝ աշխարհի և նրա ամբողջականության վերաբերյալ գիտելիքների ձևավորումն է: Այս առումով, ինտեգրված է համարվում այն դասը, որի ընթացքում մի առարկայի ուսումնական նյութի ուսումնասիրումը կազմակերպվում է մեկ այլ առարկայից ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման միջոցով: Երկրորդ դասարանի մայրենիի առարկայական ծրագրում նախատեսված է բառի մասերի ուսումնասիրությունը: Մեր համոզմամբ, այն առավել արդյունավետ է ուսումնասիրել «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկային ինտեգրումուվ նում «Արմատ» թեմայի

ուսումնասիրումը կատարեցինք հետևյալ քայլաշարով: Դասի **խթանման փուլում** ցուցադրեցինք հետևյալ ծառի նկարը և քննարկեցինք : Մենք երկրորդ դասարա



կառուցվածքը: Նշեցինք, որ ծառի ամենակարևոր մասը արմատն է, դրանով է նա ջուր և հանքային նյութեր ստանում: Արդյունքում երեխաները եկան այն եզրակացության, որ առանց արմատի ոչ ծառի բունը կլինի, ոչ ճյուղերը, ոչ տերևները, ոչ էլ պտուղները, եթե, իհարկե, պտղատու ծառ է:

Իմաստի ընկալման փուլում գրատախտակին գրեցինք բառեր և հանձնարարեցինք դրանցով նորերը կազմել: Ապա քննարկեցինք այդ բառերը, բացատրեցինք

մայր- *մայրենի, մայրաբար, մայրիկներ, մայրություն*

հայր- *հայրիկ, հայրենիք, հայրություն, հայրական, հայրենական հայրաբար*

գիր- *գրիչ, գրել, անգիր, գրող, գիրք*

գործ- *գործիք, գործարան, անգործ, գործիչ, գործավար*

իմաստները, որոշներով երեխաները կազմեցին բառակապակցություններ:

Կշռադատման փուլում կազմակերպեցինք խմբային աշխատանք: Աշակերտներին բաժանեցինք խմբերի: Յուրաքանչյուր խմբի տվեցինք ծառեր՝ համապատասխան արմատով: Հանձնարարեցինք ծառի ճյուղերի վրա գրել իրենց կազմած բառերը:



գույն ***խաղ*** ***օդ*** ***փայտ***

Այնուհետև հանձնարարեցինք աշակերտներին բառերից մտովի հանել ընդգծված հատվածը և փորձել բացատրել մնացած մասի իմաստը: Երեխաները, իհարկե, չկարողացան, և եկան այն եզրակացության, որ առանց ընդգծված մասնիկների, իրենց կազմած բառերը իմաստ չունեն: Այնուհետև առաջարկեցինք աշակերտներին բառը «համեմատել» ծառի հետ: Երկուսն էլ տարբեր մասերից են կազմված, ծառը առանց արմատի չի կարող գոյություն, իսկ բառը՝ առանց ընդգծված մասնիկի: Պայմանավորվում ենք երեխաների հետ, այսուհետ բառի հիմնական իմաստը կրող հատվածը անվանել բառի արմատ:

Առաջարկում ենք բառի արմատի ուսումնասիրումը կազմակերպել այսպիսի ինտեգրման միջոցով:

Վերջին ժամանակներում տարբեր առարկաներին ինտեգրվել է ֆինանսական բաղադրիչը: Թեև այն չի ինտեգրվել է մայրենիին, հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները, սակայն դա չի արգելում մեզ մայրենիի որոշ դասերի, որոնց ենթատեքստը բխում է ֆինանսական կրթության չափորոշիչներից, տալ այդպիսի բովանդակություն: Օրինակ «Մայրիկի հաշիվը» դասի նախապատրաստական զրույցը կազմակերպեցինք հետևյալ հարցաշարով.

1. Ի՞նչ է հաշիվը:

2. Ինչպե՞ս կարելի է կազմել հաշիվ:

3. Ի՞նչը կարելի է գնել, ինչը՝ ոչ:

4. Փողով ի՞նչը չի վաճառվում:

5. Ի՞նչ ծառայություններ եք մատուցում տանը, հարազատներին: Երբևէ կազմել եք ձեր ծառայությունների հաշիվը:

Մայրենիի դասերի հետաքրքրաշարժությանը նպաստում են դասերի ընթացքում կազմակերպվող բեմականացումները: Թատերականացված դասերը գրավիչ են նրանով, որ դրանք դասարանում ստեղծում են տոնական մթնոլորտ՝ ապահովելով բարձր տրամադրություն, թույլ են տալիս երեխաներին ազատ ստեղծագործել և նպաստում են փոխօգնության և հաղորդակցման կարողությունների զարգացմանը: Մենք մեր փորձով համոզվել ենք, որ որպես կանոն, դասերի թատերական պահերը բարձրացնում են մայրենիի դասի արդյունավետությունը: Մենք մեր դասավանդման ընթացքում բեմականացրել ենք «Մայրենի 2» դասագրքի «Երեք հարուստ» հեքիաթը: Այդ աշխատանքի կազմակերպման համար նախ աշակերտները ներկայացրին կերպարներին, ընտրեցինք «դերասաններին» և հեղինակին: Իրականացրինք բեմադրությունը: Դրանից հետո աշակերտներն իրենց հարցերն ուղղեցին դերակատարներին: Հնչեցին մի շարք հետաքրքրաշարժ պատասխաններ: Հենց դերակատարներն էլ կազմակերպեցին բառային աշխատանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր ուսումնասիրած մեթոդական գրականության մեջ առաջարկված հետաքրքրաշարժ լեզվական առաջադրանքներն ու վարժությունները, ինչպես նաև դիդակտիկ խաղերը ոչ միշտ են համապատասխանում մայրենիի առարկայական ծրագրի պահանջներին և հնարավոր չէ դրանք առանց լրամշակման կիրառել դաս-դասարանային եղանակով կազմակերպվող ուսումնական գործընթացում:

2. Աշխարհի աննախադեպ զարգացման պայմաններում կարիք է զգացվում արդիականացնելու կրթության բովանդակությունն ու ուսուցման և դաստիարակության կազմակերպման մեթոդներն ու հնարները: Գաղտնիք չէ, որ այսօրվա աշակերտին դժվար է որևէ բանով զարմացնելը, և այդ ճանապարհով՝ նրա ուշադրությունը կենտրոնացնելը դյուրին չէ: Մեր համոզմամբ՝ այս խնդիրներն արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է դասը կազմակերպել հետաքրքրաշարժ ոչ ստանդարտ մեթոդների կիրառմամբ:

3. Ըստ տարրական դպրոցում լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման պարուրաձև սկզբունքի՝ յուրաքանչյուր դասարանում գործնական անդրադարձ է իրականացվում անցած լեզվական նյութին (դասագրքերում բավարար չափով տեղ է զբաղեցնում դրանց առնչվող վարժությունների համակարգը), որը նպաստում է մայրենիի լեզվական գիտելիքների գիտակցված ուսումնասիրմանը:

4. Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման՝ գործընթացի արդյունավետությանը նպաստում է մեր մշակած հետաքրքրաշարժ մեթոդական համալիրը (հնարներ, խաղեր, հեքիաթներ, իրադրային վարժանքներ), որը փորձարկել ենք լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման տարբեր փուլերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Ա, 200 խաղ, Եր., «Զանգակ» հրատ, 2017:
2. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Եր.,«Զանգակ», 2009, 80 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ», 2018, 420 էջ:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Եր., Էդիթ Պրինտ, 2016, 160 էջ:
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Եր: Էդիթ Պրինտ, 2016, 192 էջ:
6. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան): Եր. ,«Անտարես», 2011, 40 էջ:
7. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան): Եր., «Անտարես», 2011, 81 էջ:
8. Հանրակրթության պետական չափորոշիչը, Եր., « Անտարես», 2011, 56 էջ:

9. Հարությունյան Հ., Հետաքրքրաշարժ հայոց լեզու: Եր., Լույս, 1979, 205 էջ:

10. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., Լույս, 1980, 564 էջ:

11. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար, Եր., Էդիթ Պրինտ 2018, 156 էջ:

12. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար, Եր., Էդիթ Պրինտ 2018, 112 էջ:

13. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2: Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Եր.: Էդիթ Պրինտ, 2016, 168 էջ:

14. Глена Доман, От 0 до 4 лет, Эксмо, 2008, ст. 224, nashydety. com/skachat-knigu-besplatno-glenn-doman-garmonichnoe-razvitie-rebenka/obuchalka-dlya-detey. ru/skachat-kartochki-glagolyi/

15. Рик Т. Г. Здравствуй, дядюшка Глагол! - М.: РИО "Самавар", 1995, ст 166:

16. Сесиль Лупан, Поверь в свое дитя, перевод с французского Е. И. Дюшен, Н. Л. Суслович, 2015, ст. 336:

17. shkola7gnomov. ru/parrents/pedagogicheskiy_navigator/metodika_domana/id/

18. http: //www. babylessons. ru/nikolaj-zajcev-metodika-obucheniya-kubiki-zajceva/

19. http: //ereadr. org/book/dlja_detej/94463-zdravstvuj-dyadyushka-glagol/55

20. https: //www. liveinternet. ru/users/irisha___irishka/post228056946/

21. https: //www. rebenok. com/catalog/15975/145624/

22. https: //www. youtube. com/watch?v=6tEzh_SREJE 23. https: //hy. m. wikipedia. org/wiki/%D4%BFD5%